

Տեղի ունեցավ քաղաքացիների մարտ ամսվա ընդունելությունը

15.03.2016



2016 թվականի մարտի 11-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Սամվել Թարվերդյանի մոտ տեղի ունեցավ քաղաքացիների հերթական ընդունելությունը: Ընդունելության համար ցուցակագրվել էր 178 քաղաքացի, ընդունելության էին եկել 169-ը:

Դրամական աջակցության խնդրանքով դիմել էին 161 քաղաքացիներ, որոնց խնդրանքը բավարարվեց:

Երեք քաղաքացիներ դիմել էին բնակարանների վթարայնության հարցերով, 2-ը՝ հողային այլ խնդիրներով, 1-ը՝ աշխատանքի տեղավորման, 1-ը՝ սոցիալական, մի քաղաքացի էլ՝ առողջարանային ուղեգրի խնդրանքով: Նշված քաղաքացիների կողմից բարձրացված հարցերին լուծում տալու նպատակով հանձնարարություններ տրվեցին մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության, առողջապահության և սոցիալական ապահովության, կրթության, մշակույթի և սպորտի վարչությունների պետերին, ինչպես նաև հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետին՝ ուսումնասիրել, օրենքով սահմանված կարգով և նախատեսված ժամկետներում պատասխանել այլ հարցերով դիմած քաղաքացիներին: